



Նոյեմբերի 30, 2021թ.

Կարծիք

ԱԱԾ նախկին պետ Արթուր Վանեցյանը և նրա ծնողներն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի դատական գործի կապակցությամբ

Դատական գործերի հանգամանքները

2020 թվականի հունիսի 4-ին ԱԱԾ նախկին պետ Արթուր Վանեցյանը և նրա ծնողները՝ Գագիկ Վանեցյանը և Մարգարիտ Ազարյանը, ներկայացրել են [հայցադիմում](#) Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի (գործ № ԵԴ/16183/02/20)՝ զրպարտություն համարվող տվյալները հրապարակայնորեն հերքելու, պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի փոխհատուցման (2 միլիոն դրամ) պահանջներով: Հայցի առիթը եղել է ՍՊԸ-ին պատկանող «1in.am» կայքում մայիսի 1-ին հրապարակված՝ [«Վանեցյանը ԶՊՄԿ-ի բեռների խոշոր փոխադրող ընկերությունը հիմնել է Մհեր Մեդրակյանի որդու հետ համատեղ. նոր մանրամասներ»](#) հոդվածը, որտեղ, մասնավորապես, նշվել է.

«...«Առաջին լրատվական»-ի տեղեկություններով, սակայն, ԶՊՄԿ-ի հետ աշխատող բեռնափոխադրման ընկերությունը միայն Վանեցյանի հորը չի պատկանել: Տարիներ առաջ Վանեցյանը և Մհեր Մեդրակյանի՝ Թոխմախի Մհերի որդին են համատեղ ձեռնարկել լոգիստիկ բիզնեսը, որի միջոցով Քաջարանից տեղափոխում են Քաջարանի պղնձամոլիբդենային ընկերությունից հումքը համապատասխան նշանակման վայրեր: Պարզից էլ պարզ է, որ ամեն մարդ չէր կարող այդ ոլորտում գործունեություն ծավալել, և դրանում նաև մեծ ներդրում էր ունեցել թե՛ Մհեր Մեդրակյանը և թե՛ Արթուր Վանեցյանի մայրը, որը նախկինում միշտ պետական աշխատող է եղել ու տարբեր պաշտոններ է զբաղեցրել»¹ :

¹ <https://www.1in.am/2743845.html>

Հեղինակն այնուհետև ներկայացրել է, որ Արթուր Վանեցյանը և գործարար Մհեր Սեդրակյանը հաստատել են մտերիմ հարաբերություններ դեռ այն ժամանակ, երբ Արթուր Վանեցյանը Երևանի Էրեբունի վարչական շրջանի ԱԱԾ պետ էր և հովանավորում էր Մհեր Սեդրակյանին, ով հասարակությանը հայտնի է «Թոխմախի Մհեր» անունով, համարվում է քրեական շրջանակների հետ կապեր ունեցող անձնավորություն և նախկինում եղել է Ազգային ժողովի պատգամավոր:

Դատաքննությունն ընթացքի մեջ է: Սույն գործով վերջին դատական նիստը կայացել է 2021 թվականի նոյեմբերի 18-ին:

2021 թվականի օգոստոսի 19-ին Արթուր Վանեցյանը, ով արդեն ԱԺ պատգամավոր է և ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար, ևս մեկ հայց է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գուրգեն Մելքոնյանի (գործ № ԵԴ/36336/02/21)՝ գրպարտություն հանդիսացող տվյալները հերքելու, հերքման տեքստը հրապարակելուն պարտավորեցնելու, պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի (2 միլիոն դրամ) փոխհատուցման պահանջներով: Հայցի առիթը հուլիսի 20-ին Հանրային հեռուստաընկերության եթերում Պետրոս Ղազարյանի հետ հարցազրույցի ժամանակ Մելքոնյանի հնչեցրած մտքերն են Արցախյան 44-օրյա պատերազմում Արթուր Վանեցյանի գործունեության մասին: Մասնավորապես՝ ասվել է.

«Վանեցյանը գնաց ու փախավ: Գնալն ու հետ գալը մեկ եղավ: Գնացին հասան էնտեղ, զենքերը հավաքեցին, գիտեին, որ էնտեղ անտեր թափած լիքը զենքեր կային, հավաքեցին բերեցին Հայաստան: Իրանց նպատակը գնալ զենք բերելն էր»²:

Հայցվորի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն գործով ներգրավվել է որպես երրորդ կողմ: Դատավարությունը շարունակվում է, հերթական դատական նիստը նշանակվել է 2021 թվականի դեկտեմբերի 15-ին:

Եզրահանգում

Տեղեկատվական վեճի առիթ հանդիսացած lin.am կայքի հոդվածում հեղինակը ներկայացրել է տեղեկություններ, որոնք, եթե հաստատվեն, կարող են հիմք հանդիսանալ պաշտոնական հանցագործության կասկածանքով քրեական հետապնդում իրականացնելու համար: Հետևաբար, այդ տեղեկությունները

² <https://www.panorama.am/am/news/2021/07/21/%D4%B1%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D6%80%D5%8E%D5%A1%D5%B6%D5%A5%D6%81%D5%B5%D5%A1%D5%B6/2539134?fbclid=IwAR3zaR7K0bBlxd8kiXBM8SHctCr2eHfm97FF9feetJxIUdjCGHWK5R2lyU>

կհամարվեն գրպարտություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ մասի իմաստով, եթե պատասխանող կողմը չապացուցի, որ դրանք համապատասխանել են իրականությանը:

Եթե, այդուհանդերձ, հաստատվի, որ տեղեկությունները գրպարտություն են, պատասխանողը, որպես լրատվամիջոցի հիմնադիր, կարող է ապավինել նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պաշտպանությանը, այսինքն՝ հիմնավորի, որ հրապարակումը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և որ հեղինակը ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու տվյալների ճշմարտությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել դրանք (ողջամիտ հրապարակում):

Հոդվածի բովանդակությունը օբյեկտիվորեն հանրային հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ խոսքը նախկին բարձրաստիճան պաշտոնատար անձի մասին է, ով ներկայումս Ազգային ժողովի պատգամավոր է, զբաղվում է քաղաքականությամբ և, ըստ լրատվամիջոցի, իրականացնում է նաև ձեռնարկատիրական գործունեություն, իսկ այդպիսի համատեղումը արգելված է օրենքով: Ըստ այդմ, հարցի մյուս կողմն է, թե արդյո՞ք վկայակոչված փաստերը ներկայացվել են բարեխղճորեն: Հրապարակման մեջ չի երևում, որ հեղինակը ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու իր բերված փաստերի ճշմարտացիությունը և հիմնավորվածությունը: Նա չի իրականացրել սեփական քննություն, այլ դրա փոխարեն հղում է կատարել իրեն հասած «տեղեկությունների» վրա, որը բավականաչափ անորոշ է:

Խորհուրդը նշում է, որ լրագրողները պետք է օգտվեն իրական տեղեկատվական աղբյուրներից, քանի որ դրանց պաշտպանության իրավունքը վերաբերում է հենց իրական ու գործնական, այլ ոչ թե ձևական ու պատրանքային դեպքերին ու պայմաններին: Թեև լրագրողները պարտավոր չեն յուրաքանչյուր տեղեկության համար վկայակոչել աղբյուրներ, քանի որ դա անհարկի կծանրաբեռնի նրանց աշխատանքը՝ հատկապես, եթե նյութը հրատապ բովանդակություն ունի³, այդուհանդերձ, Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ տեղեկությունների ճշմարտացիությունը և հիմնավորվածությունը պարզելու նպատակով միջոցներ ձեռնարկելու պահանջը ինքնաբերաբար չի դադարում գործել, եթե հեղինակը վկայակոչել է որևէ աղբյուր:

Անկախ տեղեկության ճշմարտացի լինելու և համապատասխան հղում կատարելու հանգամանքներից՝ բարեխղճության դրսևորման մասին կարող է վկայել լրագրողի կողմից կատարված քննությունը, որը կերևա բովանդակությունից: Տվյալ դեպքում, ինչպես ակնհայտ է դառնում հրապարակումից, լրագրողն աշխատանք չի կատարել

³ Տե՛ս ՏՎԽ-72 Կարծիքը Արայիկ Առաքելյանն ընդդեմ www.168.am լրատվակային կայքի դեմ գործով

պարզելու համար տեղեկությունների արժանահավատությունը: Լրագրողական այնպիսի գործողություններ, ինչպիսիք են մեկնաբանություններ վերցնելը, պաշտոնական բաց աղբյուրներից փաստաթղթեր ձեռք բերելը, վիճակագրական տվյալներ հայթայթելը, փորձագիտական կամ մասնագիտական աղբյուրներից եզրակացություններ ստանալը, հավաքած տվյալների համադրումը և այլն, չեն կիրառվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ նույնիսկ, եթե պատասխանող լրատվամիջոցին հաջողվի դատական քննության փուլում ապացուցել հրապարակված փաստերի ճշմարտացիությունը, միանշանակ թերի է մնում տվյալները և հանգամանքները հավասարակշռված ու բարեխղճորեն ներկայացնելու պահանջի կատարումը: Այդուհանդերձ, վերջինը միայն էթիկական բնույթի խնդիր է, քանի որ 1087.1 հոդվածի 3-րդ մասի իմաստից բխում է, որ անձը բոլոր դեպքերում ազատվում է պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ հրապարակային ներկայացրած փաստական տվյալները համապատասխանում են իրականությանը:

Ինչ վերաբերում է երկրորդ տեղեկատվական վեճին, ապա Խորհուրդն այստեղ խնդրահարույց է համարում այն հանգամանքը, որ լրատվամիջոցը, որն ընդամենը տրամադրել է հարթակ, ներգրավվել է դատավարությունում որպես երրորդ կողմ: Բացի նրանից, որ ՁԼՄ-ն չի կարող որևէ պատասխանատվություն կրել իր հարթակից այլ հեղինակի հնչեցրած արտահայտությունների համար, լրատվամիջոցը չի կարող նաև որևէ գործուն դերակատարում ունենալ այդ դատավարության մեջ:

Խորհուրդը նկատում է, որ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն ներգրավվել է որպես երրորդ կողմ հայցվոր Արթուր Վանեցյանի պահանջի հիման վրա: Լինելով քաղաքական գործիչ՝ նա, ըստ միջազգայնորեն ընդունված նորմերի, պետք է առավել հանդուրժողականություն ցուցաբերեր լրատվամիջոցի նկատմամբ, հատկապես, երբ վերջինս քննադատության հեղինակը չէ և միայն հարթակ է հանդիսացել: Քաղաքական գործիչները, առավել ևս օրենսդիր մարմնի ներկայացուցիչները, պետք է հնարավորինս ձեռնպահ մնան լրատվամիջոցների ազատություններին միջամտելուց, այդ թվում նաև նրանց որպես դատավարության երրորդ կողմ մասնակից դարձնելուց, եթե դրա համար չկա իրական անհրաժեշտություն: Տվյալ դեպքում, դատելով գործի փաստերից, այդպիսի անհրաժեշտությունը բացակայում է:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոդոյան (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Արա Ղազարյան - «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի տնօրեն

Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր
Աշոտ Մելիքյան - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Օլգա Սաֆարյան - Փաստաբան
Դավիթ Սանդուխյան - Փաստաբան